

սկզբնից ձեռնարկելով զան զն վնասողով ինչ
-ազ զան մտածաբար լսելու՝ զիսն մեղադրանք
-մանցի զն վնասող զմասն ճառագարս մարմանս
-[Երկու տղայ իրենց մօրը գիրկը կեցաց կրպագ-
նուին, ինչ անուշ օրինակ եղբայրսիրուբեան :
Ո՞չ ապաքեն միանգամայն պերճախօս յանդի-
մանութիւն մի Է ապիկայ անունը որ իրենց մօրը
այսինքն հայրենեաց եւ ինքնաջ մեղան միմեմա
մարդկային բնութեան
գիրկը կեցած ալ ըլլա-
լով անհաշտ բշնամու-
բեամբ ու կոխներով
իրարու միմ կուտեն :
Մինչեւ երբ Կայենի եւ
Աբելի բոռները իրենց
նախահարց ճամբան
պիտի բռնեն, մինչեւ
երբ եղբայրական համ-
բուրիւ մը պիտի չմոռ-
նան իրենց անօրէն
բշնամութիւնը : Զմար-
դիկ իրարու մօտեցը-
նելու համար քանի
քանի հնարքներ հնա-
րեցին մարդիկ : Բայց
ինչ հարկ կար այնչափ
հնարքներ փնտռելու
միթէ՝ բաւական չէր
այս բանիս այն բնա-
ծին հակամիտութիւնը
որով բնական կերպով
մը մարդկային կերպա-
րանք ունեցողին վրայ
սեր մը կուսնանք :
Տղուն մէկը ուրիշ տղայ
մը տեսնալուն Գլեա
խնտում երեսով դեպ
ի անոր գիրկը կընե-
տուի. միայն ուշ ատեն
երբոր փորձառութե-
նէն սիրտը կը պաղի,
երբոր ներհական շանը
մարդկանց մէջ կը մտ-
նէ, այն ատեն սրտին
սիրոյ դուռը կը գոցուի, կասկածը կը բռնէ : Եղբայր-
սիրութիւնը աստուածային դուռ մըն է, իսկ նա-
խանձող բշնամութիւնը մարդկային չարութեանը
հնարքն է : Ապա ուրեմն երբ կուգենք որ մէկ



Եղբայրսիրութիւն

ճայն ջառա զն Երբը զմեղաբար զգծիլը մի
մեղաբար զն զմանտ զն միջրա մում միմ. զմեղաբար
յա զմանտ, մմ ճաջի մեղաբար զմեղի ձգ միմ ճաջ
մօրը գնաւակաց մէջ եղբայրսիրութիւնը տիրե-
ու հաստատուի, պիտի նայինք որ լաւ օրէնքնե-
րով ինքզինքնիս կատարելագործենք : Որչափ
որ մարդկանց իրարու ունեցած կարօտութիւն-
ները շատնան, եւ բը-
նութիւննին անուշնայ,
այնչափ մէջերնին մէկ-
գմէկ սիրելու յօժարու-
թիւնը կաւելնայ : Եր-
բոր բնութիւննիս աղեկ-
նայ, մենք ալ նորէն
կըմանկանանք, այս-
ինքն նորէն կըսկսինք
առանց անձնական
շահներնիս փնտռելու
սիրով վարուիլ իրա-
րու հետ : Այն ատեն
կիմանանք քե մէկմե-
կու ինչպէս պիտի կա-
րեցինք, եւ ինչ մտքով
պիտի հասկընանք
Քրիստոսի Տեսուն մե-
րոյ այն խօսքն որ ըսաւ
քե « Միրեցեք զմի-
մեանս : » Եղբայրսի-
րութիւնը բնականաց
սիրոյն մասն ըլլալով,
մեծերուն պատիւ բնե-
լու պարտքն ետ չձգեր
զմարդ : Կըճանչնայ քե
հարկաւ հայր մը պիտի
ըլլայ, անդրանիկ մը
պիտի գտնուի որ խը-
րատ տայ, առաջնորդ
մը պիտի գտնուի որ
ճամբայ ցուցնէ. մի-
այն քե ամենուն չըրայ
գրասիրութիւն մը տա-
րածել կուտայ, որով
պատուիրանին պան-
պանութիւնը կը դիւրա-
նայ, եւ հնազանդութիւնը կը քաղցրանայ :
Հին ազգաց մէջ միայն Հրեաներն են որ եղ-
բայրսիրութեան հոգին բնկերական վիճակին
մէջ ալ մտցուցին. ուրիշ ամեն ազգաց մէջ ամեն

մարդ ինքզինքը տարբեր ցեղէ մը առաջ եկած կը կարծէր. միեւնոյն ազգին մէջ ոմանք մտքերնին դրած էին քէ իրենք երկնքէն իջած են, ոմանք ալ երկրէս ելած. երբայցեք, ընդհակառակն, իրար մէկ մօր զաւկըներ եւ եղբայր կը ճանչնային, հարբատութիւնը՝ պատիւն ու խելքը ամենեւին պատճառ չէր ըլլար անհասարութեան ու մէկգմէկ իրարու ազգակից ճանչնալու : Իսկ Քրիստոս այս եղբայրսիրութեան օրէնքը այնպէս հաստատեց որ առանց ասոր վարուողը, կամ ասոր հակառակ վարք ցուցնողը, Քրիստոնեայ անգամ չըսուիր :

« Յայսմ ծանիցեն ամենեքեան երէ իմ աշակերտք էք՝ երէ սիրիցեք զմիմեանս » ըսաւ : Ո՛րչափ փափաքելի է որ այս փրկաւետ սկզբունքը խոր տպաւորուի մեր ազգին որտին մէջ, ու քանի որ հոս դրուած պատկերը մտքերնին գայ՝ յիշեն իրենց քաղցր պարտքն ու երջանկութիւնը :

ՍՏԵՓԱՆ Վ. ՄԻՍԱԲԵԱՆ,

Աշակերտ Արեւել. Ազգայ. Վարժ.

ՍԻՐԵԼԵԱՅ ՅԱՐԳԸ ՀԱՆՁՆԱԼ.

Երկար ատեն հետերնին բնակած մարդկանց յարգն ու արժէքը հազիւ երբեք կը ճանչնանք :

Կէօքէ, հոջակաւոր Գերմանացի բանաստեղծն ու մատենագիրը որ 1832ին վախճանած է, գեղե-

ցիկ քերթուածի մը մէջ կը պատմէ քէ ինչպէս ճամբորդին մէկը Հռովմայ դաշտերուն մէջ բափառական պտըտած ատենը տնակի մը կը հանդիպի, որ հին տաճարի մը աւերակներովը շինուած է եղեր : Մէջի բնակող կնիկ մարդը չկրնար հասկընալ քէ իր խեղճուկ տնակին որ բանին զմայլած կընայի, կընիւնայ օտարականը, եւ ամենեւին մտքէն չանցնիր որ իրեն ողորմելի երեւցած բնակարանին նիւթերը անգին հնութիւններ ըլլան :

Այսպէս նաեւ մենք : Դիմացինին պակասութիւններէն քաշած նեղութիւննիս միայն կը զգանք, ու կատարելութիւններէն քաղած օգուտնիս չենք իմանար. քանի քանի քաղցրահամբոյր հոգիներ, անյեղի սերեր, վսեմ անձնանուիրմունքներ շատ անգամ մեզի անծանօթ կը մնան մինչեւ որ օտարականին մէկն անցնի ու մեզի հասկըցընէ զանոնք : Երանի մեզ քէ որ տարակայութիւնը կամ մահը չըլլան որ մեզի անծանօթ մնացած հարստութիւննիս յայտնելով ստիպեն զմեզ տխրագին ու արտասուական աչուրներով գաղղիացի Փոնսար քերթողին հետ ըսելու քէ « Շատ ուշ կիմանայ մարդ որ կորսընցուցածը բաւական չսիրեր եղեր » : Ուրեմն սիրենք մեր սիրելիքը քանի որ մեր քովն են, քանի որ կարող ենք գիրենք սիրել ու յարգել. որպէս զի չըլլայ քէ ետքը ցաւինք, որպէս զի երբոր կորսընցընելու ստիպուինք, գեթ անով մխիթարուինք քէ բաւական սիրեցինք զիրենք ու յարգերնին ճանչցանք :

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՓՈԽՈՒՄՆ ՅԱՍՏԵԱՅ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎԱԿԻՄ ԱՂԱՅԻ ԱՍԼԱՆԵԱՆ.

Եւդոկիոյ բարեպաշտ եւ ազնուասիրտ ազգայինք մեծ եւ ցաւալի կորուստ մը ըրին այս ամիս մեծահամբաւ Մանտեսի Յովակիմ աղային մահուամբը : Այս կարգէ դուրս հանճարի եւ սակաւագիւտ բարեսրտութեան տէր անձին գովեստները բոլոր Փոքր Ասիոյ մէջ հռչակուած էին. իր կարծիքները գրեթէ միշտ ուղիղ կեցիւն, եւ ար-

դարասէր ու ճշմարտախօս բնաւորութեանը համար՝ խօսքերը մէյմէկ պատգամի պէս ընդունելի կըլլային ամենուն : Բարեպաշտութեանն ու ժամասիրութեանը կողմանէ սքանչելի օրինակ էր իր քաղաքակիցներուն, եւ քրիստոնէական առաքինութեամբն ու ազգասիրութեամբը խաղաղարար եւ պատկառելի ամենեցուն : Ասոնք